

ւային կողմը գտնուող կամարածածկ ընդարձակ գետնայարկը վերածել կուտայ տպարանի. քանի մը տարի վերջ երբ տպարանական գործերը կ'ընդարձակուին նոյն տպարանին վրայ մասեր կ'աւելնան, նոր բաժանումներ կը կատարուին, նորոգութիւններ և փոփոխութիւններ կ'ըլլան, Յակոբ Աշըքեան այդ ծախքերուն համար կը նուիրէ 274 ոսկի, որուն ի յիշատակ հիւսիսային արտաքին պատին վրայ կը գետեղուի հետեւեալ արձանագրութիւնը. «Երկրորդ մասն տպարանիս յաւելեալ իբր գրանոց և ձուլարան նորոգեցաւ ի պատրիարքութեան Տ. Եսայեայ Ս. Արքեպս. ի յիշատակ մեծահամբաւ Աշըքեան մհի. Յակոբ Էֆէնտիի ի Կեսարիոյ Թալաս գեղջէն. 1871» (Անդ. էջ 47—48): 1871ին 2657 ոսկիի կտակ մը կ'ընէ Ժառ. Վարժ. ին և կտակակատար կը կարգէ Երուսաղէմի պատրիարքը. պայմանաւոր նոյն գումարը յատկանայ հաստատուն կալուածի. կտակագիրն և անոր մանրամասնութիւնները տեսնել (Սիօն, 1871, էջ 247): Մհո. Յակոբ իբր բարերարը Ս. Յակոբի վանքին, թաղուած է Ս. Փրկչի վանքին մէջ և ունի մահարձան մը. նոյն դամբարանին քով ամփոփուած է նաև իր կնոջ գաւրնի ոսկերտիքը (1824—1885):

ՅԱԿՈՒԲ ԵՊՍ. ԱՇՈՏ, ՓԱՓԱՋԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1847ին. տեղապահ Եգիպտոսի 1898ին. եպս. կը ձեռնադրուի 1899ին. Առ. Ճանիկի 1905ին: Վարած է նաև քորոզական և վարչական պաշտօններ: 1889ին Յարութիւն պարքին կ'ընկերանայ Ս. Յակոբի վանքը գալու համար: Քննչական պաշտօնով ալ Գէորդ Ֆիքրի Աճէմեանի և Հայկազուն Պէկեանի հետ 1909 Յնվր. 23ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը: 1918ին կը վախճանի Զմիւռնիոյ մէջ:

ՅԱԿՈՒԲ ԵՊՍ. ԵՐԵՒԱՆՑԻ.— Եօթն անգամ ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը. վերջինը՝ Ռիսկ (=1599) թուին. յիշեալը ՄՁ. Թ. 25 ձեռագիրին մէջ կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «Ես մեղօր Յակոբ Եպս.: Երևանցի: է. անգամ եկի Ք. ի գերմին. : Եկի պաքի: Բ. անկամ ասմօւրքս ելայ ի գուրս: Վերջին որ եկի ի թուին Ռիսկ (=1599): Մէկ րեբան ողորմի ասացէք: Ած. ձեզ ողորմի միւսգմ. գլտան.» (Սապ. Յուց. էջ 119):